ԷՄԻԼ ՀԱՅԿԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

Սովետական Հայաստանի գիտությունը մեծ կորուստ կրեց։ 1980 թ. սեպտեմբերի 16-ին, 58 տարեկան հասակում, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայկական ՍՍՀ ԳԱ վիցե պրեզիդենտ, հանրապետության ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, Հայկական ՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ՍՄԿԿ անդամ Էմիլ Հայկի Միրզաբեկյանը։

Է. Հ. Միրզաբեկյանը ծնվել է 1922 թ. դեկտեմբերի 12-ին, Երևանում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1940 թ. նա զորակոչվել է սովետական բանակ և ծառայել մինչև 1945 թ., որպես հակատանկային կործանիչ մարտկոցի հրամանատար. ակտիվորեն մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել մարտում։ Ռազմաճակատում 1944 թ. նա ընդունվել է ՍՄԿԿ շարքերը։ 1945 թ. զորացրվելով սովետական բանակից, ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը։ Հաջողությամբ ավարտելով ուսումը, 1950 թվականին նա աշխատանքի է անցնում Երևանի ֆիզիկայի ինստիտուտում։ 1953 թ. ավարտում է ՍՍՀՄ ԳԱ Պ. Ն. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, գիտական աշխատանք կատարում նույն ինստիտուտում։

1955—1960 թթ. Է. Հ. Միրզաբեկյանն աշխատում է Հայկական ՍՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանում ավագ գիտական աշխատողի, այնուհետև ռադիոֆիզիկայի բաժնի վարիչի պաշտոնում։ 1960 թվականից նա հանրապետության ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի անփոփոխ դիրեկտորն էր։ Է. Հ. Միրզաբեկյանը երկար տարիներ մեծ աշխատանք է կատարել Երևանի պետական համալսարանում բարձրորակ դիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ։

Ականավոր գիտնական Է. Հ. Միրզաբեկյանը մեծ ծառայություններ է մատուցել հայրենական գիտությանը։ Նա ռադիոֆիզիկայի բնագավառում առաջատար մասնագետ էր և գիտության ու տեխնիկայի այդ ուղղության հիմնադիրը հանրապետությունում։ Գիտնականի նրա անունը լայնորեն հայտնի է ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ արտասահմանում։

1971 թ. Է. Հ. Միրզաբեկյանն ընտրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս։

1974—1976 թթ. է. Հ. Միրզաբեկյանը հանրապետության ԳԱ ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն էր, այնուհետև՝ ակադեմիայի վիցե պրեզիդենտ։ Իր դիտական և կազմակերպչական գործունեությամբ նա ծանրակշիռ ավանդ ունի մեր հանրապետությունում գիտության զարգացման և գիտական հետազոտությունների արդյունքների ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու գործում։

է. Հ. Միրզաբեկյանն ակտիվորեն մասնակցել է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել է. Հ. Միրզաբեկյանի ծառայությունները։ Նա պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով, մեդալներով։

Էմիլ Հայկի Միրզաբեկյանի՝ կոմունիստ գիտնականի, գիտության տաղանդավոր կազմակերպչի, մեծ հմայքի և անաղարտ հոգու տեր մարդու հիշատակը միշտ կմնա մեր սրտերում։

Կ. Ս. Դեմիրճյան, Բ. Ե. Սարկիսով, Ֆ. Տ. Սարգսյան, Գ. Ն. Անդրեև, Հ. Մ. Ոսկանյան, Կ. Լ. Դալլաքյան, Վ. Բ. Ղալումյան, Դ. Ա. Մարտիրոսյան, Լ. Ն. Ներսիսյան, Ե. Թ. Ասծատրյան, Մ. Բ. Արզումանյան, Մ. Հ. Մուրադյան, Լ. Գ. Սահակյան, Հ. Մ. Բաղդասարյան, Մ. Բ. Բայրամով, Մ. Մ. Բախչինյան, Ա. Մ. Կիրակոսյան, Կ. Հ. Ղամբարյան, Հ. Ա. Հայրապետյան, Վ. Մ. Մովսիսյան, Ռ. Ք. Սվետլովա, Ս. Լ. Թումանյան, Հ. Ս. Սաղոյան, Հ. Ե. Վարդանյան, է. Ս. Գաբրիելյան, Վ. Հ. Համբարձումյան, Յա. Ի. Խաչիկյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Վ. Վ. Ֆանարջյան, Գ. Ա. Գալոյան, Ս. Ա. Համբարձումյան, Գ. Մ. Ղարիբյան, Հ. Տ. Ադոնց, Ա. Բ. Նալբանդյան, Հ. Գ. Մաղաքյան, Վ. Հ. Ղազարյան, Գ. Բ. Ղարիբջանյան, Գ. Ա. Բրուտյան, Հ. Խ. Բունիաթյան, Ա. Ղ. Իոսիֆյան, Յու. Լ. Ջավադյան, Ռ. Մ. Մարտիրոսյան